Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

101/595 №1148
1928 №136

# ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

891.99 Մ
Թ-95

Նկարներ Գ. Յերեմյանի

23 APR 2013
р-95
9255

# ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ.

Ժամանակով Կատուն ձոն եր,
Շունն ել գլխին գդակ չուներ,
միայն, գիտեմ վոչ՝ վորդիանց վորդի,
ճանկել եր մի գառան մորթի:
Յեկավ մի որ, ձմեռվան մոտին,
Կատվի կուշտը տարավ մորթին:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
60455 · 67
Ca M/743
30 MAY 2011



--Բար՛ աչողում, ուստա Փիսո,
գլուխըս մըրսեց, ի սեր Աստծո,
առ ես մորթին ու ինձ համար
մի գդակ կարի գլխիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մնա,
համա-համա շատ չուշանա:

—Աչքիս վըրա, քեռի Քուչի.
մի գդակ ա, հո մի քուրք չի,
քու թանգագին խաթեր համար
ուրբաթ որը համեցեք տար:
Փողի մասին ավելորդ ա,
մեր մեջ խոսելն ել ամոթ ա.
ի՞նչ մեծ բան ա, տո՞ հեր որհնած,
միա՞յն, միա՞յն մի գդակի վարձ:



Ուրբաթ օրը քեռի Քուչին
ուսից առաջ բաց-բաց կուճին
թափ թափ տալով՝ ծանըր ու մեծ
ուստա Կատվի շեմքում կանգնեց:
—Ուստեն ո՞ւր ա, փափախս ո՞ւր ա...
—Մի քիչ կացի—հըրես կերևա:

Ուստեն եկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, քեղի տակին
հրեն-հրեն քիչ փընթփընթաց
ու մուշտարու վըրա թըռնղաց.
—Ցուրտը տարա՞վ, վա՜յ, տնաշեն,
չես թող անում մի շունչ քաշեն.
հեշտ բանն ա չի՞, հըլա նոր եմ
ցըրցամ տըվել, թե վոր կարեմ:
—Դե, հե՛ր օրհնած, եռնե՛նց ասա,
եդ քարկա՞նաղ եղ ընչիս ա:
Փող եմ տըվել, շուտով կարի,
թե չէ՝ ասա եգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
համ խոսում ես, վըրես գոռում,
հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
քա՞նի, ախպեր, գընամ ու գամ...

Ասավ Քուչին ու նեղացած
վերադարձավ գըլուխը բաց:

Մին էլ եկավ, դարձյալ չըկար.
էս անգամը դիպան իրար.
էլ անպատիվ, անկարգ խոսքեր,
էլ հին ու նո՛ր, էլ հերն ու մե՛ր,
էլ գող Փիսո՛, էլ քաչալ Շու՛ն...
բանը հասավ դիվանբաշուն։








Շունը մինչեվ գընաց. յեկավ,
ուստա Կատուն կտուրն ընկավ,
գլուխն առավ ու մի գիշեր,
հայդե՛, կորավ. են կորչին եր...
Են օրվանից մինչեվ օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել.
իր մտքումը դեռ պահում ա.
վորտեղ Կատվին պատահում ա,
վեր ա թռչում, վըրա վազում,
իրեն մորթին յետ ա ուզում.
իսկ սեվերես Կատուն հանկարծ
յետ ա դառնում ու բարկացած
փըշտացնում ա. մըրթամ նոր եմ
ցըրցամ տըվել, թե վոր կարեմ։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0396523

9295



1927 ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ ԳԻՆԸ 50 Կ.

ՏԻՐԱԺ 6000

№ 537

ՎԻՄԱԳՐ. ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ

ԶՐԱՒ. 164 Բ.